

պով հետեւեալ ծանօթագրութիւնը կու տայ, Օգոստոս 15, Գերսեւմանիի սեջ, Մարկիսանոս կայսեր արքայայրը, յիշատակ Ս. Աստուածածնի: Այս տողերէն պարզօրէն կը հասկցուի թէ Գեթսեմանիի Ս. Կուսի եկեղեցին առաջին անգամ հիմնարկած է Մարկիանոս կայսրը. անոր առատաձեռնութեան արդիւնքն է այս սրբավայրը որ ունէր բիւզանդական ճարտարապետութեան ոճը. նոյն եկեղեցին՝ Մարկիանոսէն առաջ գոյութիւն չունենալը բացորոշ կերպով յայտնի է: Գ. դարուն լատին ուխտաւորուհին Էթէրիա Երուսաղէմ գտնուելով Ս. Զատկին ներկայ եղած էր Աւագ Հինգշաբթիի կէս զիշերուան թափօրին, իր Ուղեգրութեան մէջ կը գրէ թէ թափօրը Զիթենեայ լեռնէն իջնելով կանգ առաւ նախ Հայր մերի եւ յետոյ Քրիստոսի մատուցեալ մատուցեալ Աւետարանին: Էթէրիա բնաւ չի յիշեր Ս. Կուսի Գերեզմանին եկեղեցին: Մարկիանոս մեռած էր 457 ին, հետեւաբար աւարտած էր նոյն եկեղեցիին շինութիւնը 453 ին. ուստի նոյն շինութենէն շատ վերջն էր որ՝ 481ին Պետրոս վրացին կ'այցելէր Երուսաղէմի եկեղեցիները, բայց իր կենսագիրը չի մանրամասներ անոր այս այցելութեան պարագաները: Ե. Դարու այս երկրորդ կիսուն կը կապուի Պաղեստինի մէջ Ս. Կուսի վերափոխեալ solին հաստատութեան պարագան. նոյն ժամանակին՝ տարակոյս չի կայ թէ անապատական Թեոդոսի բացատրութեան և վերեւ յիշուած սաղիմական ծիսարանին համաձայն, Ս. Աստուածածնի յիշատակին հրապուրուած բազմամբօխ ուխտաւորներ Երուսաղէմ կու գային կատարելու համար այս տօնը: Յայտնի ըլլալով Երուսաղէմի ծանօթ Ծիսարանին առանձնական և տեղական հանգամանքը, պէտք է խոստովանիլ թէ Օգոստոս 15 ի տօնը սաղիմական ծագում ունէր և կը վերաբերէր Գեթսեմանիի մէջ Մարկիանոսի շինած եկեղեցիին: Այս թուականը վերջնականապէս ընդունուելով Պոլսի մէջ, Մօրիկ կայսեր (582-601) հրովարտակովը պարտադրուեցաւ ուրիշ եկեղեցիներու, որպէս զի նոյն օրը կատարեն Ս. Կուսին ննջման տօնը (Dormition). սերմն որոշապէս յայտնի կ'ըլլայ թէ Ե. դարուն արդէն հիմնուած էր Գեթսեմանիի Ս. Կուսի եկեղեցին:

Զ. դարու վկայութիւնները որքան այս եկեղեցիին կացութեան, նոյնքան Ս. Կուսին Գերեզմանին գոյութեան մասին շատ յստակ են. այդ վկայութիւնները կը քաղենք Theodosius ի, Bre-